

Ամսաթիվ՝

05/06/2018

Ուղղված՝

Շիրակ ֆուտբոլային ակումբին / ՈՒԵՖԱ-ի Էթիկայի և կարգապահական տեսուչին

Հերթական համար՝ 31419

Սույն փաստաթուղթը կազմված է 8 էջից (ներառյալ առաջին էջը):

Հարգելի պարոնայք,

Կից ներկայացվում է ՈՒԵՖԱ-ի Բողոքարկման մարմնի 2018թ. հունիսի 5-ին կայացած նիստի արդյունքում ընդունված՝ Գործը դադարեցնելու մասին կարգադրությունը:

Ակնկալում ենք, որ սույն որոշումը պատշաճ ուշադրության կարժանանա, և կապահովվի դրա իրականացումը:

Հարգանքով՝ /ստորագրություն/

ՈՒԵՖԱ-ի Բարեկարքության հարցերով գործադիր տնօրեն՝ Էմիլիո Գարսիա

ՈՒԵՖԱ

Բողոքարկման մարմին

Գործը դադարեցնելու մասին կարգադրություն՝

Տրված 2018 թվականի հունիսի 5-ին

Բողոքարկման մարմնի կազմը՝

Նախագահությամբ՝ Պեղրո Տոմասի (Իսպանիա),

Քննեց գործը՝ մասնակցությամբ

ՈՒԵՖԱ-ի՝ որպես Հայցվոր,
Հայցվորի ներկայացուցիչ՝ **ՈՒԵՖԱ-ի** Էթիկայի և կարգապահական տեսուչ
Պրն. Լիետարդ,

ընդդեմ

Շիրակ ՖԱ-ի՝ որպես Պատասխանող,
Պատասխանողի ներկայացուցիչ՝ փաստաբան **Ռուբեն Հակոբյան:**

Ընդունելության չափանիշներ, ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների լիգայի Կանոնադրության
4.02 և 4.03 հոդվածներ

I. Գործի փաստական հանգամանքները

1. Ներկայացվող հիմքերը Կողմերի ներկայացրած գրավոր նյութերի, իրեղեն ապացույցների, ինչպես նաև Բողոքարկման մարմնի կողմից իրականացված վարույթի ընթացքում արված հայտարարությունների հիման վրա Բողոքարկման մարմնի կողմից հաստատված և գործի քննության համար նշանակություն ունեցող հիմնական փաստերի ամփոփ նկարագիրն են: Թեև Բողոքարկման մարմինը հաշվի է առել նշված վարույթի շրջանակներում Կողմերի ներկայացրած բոլոր փաստերը, պնդումները, իրավական փաստարկները և ապացույցները, սույն որոշման մեջ Բողոքարկման մարմինը անդրադառնում է միայն ներկայացված այն նյութերին և ապացույցներին, որոնք անհրաժեշտ են սույն որոշման պատճառաբանությունը բացատրելու համար:
2. Շիրակ ՖԱ-ը մարզական արդյունքներով որակավորվել է ՈՒԵՖԱ-ի 2018/2019 թթ. Չեմպիոնների լիգայի համար՝ համաձայն ՈՒԵՖԱ-ի համապատասխան կանոնակարգերի:
3. Համաձայն ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների լիգայի Կանոնակարգի (այսուհետ՝ ՈՒՉԼ-ի Կանոնակարգ) 4.01.g հոդվածի՝ մրցաշարին մասնակցելու իրավունք ունենալու համար անհրաժեշտ է, որ ակումբը բավարարի հետևյալ չափանիշներին.

«2007թ. ապրիլի 27-ին ՈՒԵՖԱ-ի Կանոնադրության 50(3) հոդվածն ուժի մեջ մտնելուց ի վեր ուղղակի և/կամ անուղղակի կերպով չպետք է ներգրավված լինի որևէ գործողության մեջ, որն ուղղված կլինի ազգային կամ միջազգային որևէ խաղի ելքը կազմակերպելուն կամ խաղի ելքի վրա ազդելուն: Ակումբը պարտավոր է այս մասին գրավոր հաստատում ներկայացնել ՈՒԵՖԱ-ի ղեկավարությանը»:

4. 2018թ. մայիսի 4-ին Շիրակ ՖԱ-ը ուղարկել է ՈՒԵՖԱ-ին 2018/2019 թթ. Ակումբային մրցաշարերի Ընդունելության չափանիշների թերթիկը՝ ստորագրված ակումբի և Հայաստանի Ֆուտբոլի ֆեդերացիայի (ՀՖՖ) կողմից:
5. Ընդունելության չափանիշների թերթիկում Շիրակ ՖԱ-ը չի զեկուցել 2007թ. ապրիլի 27-ից սկսած ակումբի կողմից ազգային կամ միջազգային որևէ խաղի ելքը կազմակերպելուն կամ խաղի ելքի վրա ազդելուն ուղղված ուղղակի և/կամ անուղղակի որևէ գործողության մեջ ներգրավվածության մասին:
6. ՈՒԵՖԱ-ի ղեկավարության խնդրանքով ՀՖՖ-ն ՈՒԵՖԱ-ին է տրամադրել ՀՖՖ Կարգապահական կոմիտեի 2018թ. մայիսի 5-ի որոշումը: Այդ որոշումը վերաբերում էր Շիրակ ՖԱ-ի սպորտային տնօրեն Արարատ Հարությունյանի կողմից ակումբի նախկին ֆուտբոլիստ, պաշտպան Էդուարդ Կպոդոյին կաշառելուն՝ 2018 թվի մայիսի 5-ին Բանանց ՖԱ-ի և Շիրակ ՖԱ-ի միջև կայանալիք խաղի ելքը վճռելու նպատակով: Որոշվել է տնօրենին ցմահ արգելել զբաղվել ֆուտբոլով, ինչպես նաև ընթացիկ առաջնությունում թիմի արդյունքները

նվազեցնել 12 միավորով և Շիրակ ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի յոթապատիկի չափով:

7. Շիրակ ՖԱ-ը վերոհիշյալ Ընդունելության չափանիշների թերթիկում չի զեկուցել վերևում նկարագրված դեպքերի մասին:
8. 2018թ. մայիսի 17-ին, երբ Շիրակ ՖԱ-ը ուղարկել է վերոհիշյալ Ընդունելության չափանիշների թերթիկը, համաձայն ՈՒԶԼ-ի Կանոնակարգի 4.07 հոդվածի ՈՒԵՖԱ-ի Գլխավոր քարտուղարը վերոհիշյալ Ընդունելության չափանիշների թերթիկը և գործը ուղարկել է ՈՒԵՖԱ-ի Վերահսկողության, էթիկայի և կազապահական մարմնին: Մինևույն ժամանակ, ՈՒԵՖԱ-ի Գլխավոր քարտուղարը խնդրել է ՈՒԵՖԱ-ի էթիկայի և կազապահական տեսուչին (ԷԿՏ) քննություն իրականացնել Շիրակ ՖԱ-ի՝ 2018/19թթ. ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների Լիգա ընդգրկվելու գործընթացի մասին:

II. Բողոքարկման մարմնի կողմից իրականացված վարույթի ամփոփագիրը

9. 2018թ. մայիսի 18-ին, համաձայն Կարգապահական կանոնակարգի (ԿԿ) 29 (3) հոդվածի, Վերահսկողության, էթիկայի և կազապահական մարմնի՝ Նախագահը գործն ուղղակիորեն փոխանցել է Բողոքարկման մարմնին:
10. Նույն օրը ակումբը տեղեկացվել է իր դեմ ընդունելության չափանիշների՝ ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների Լիգայի Կանոնակարգի 4.02 հոդվածի խախտման մասով կարգապահական վարույթ հարուցելու մասին: Գործի նյութերի մեջ ներառված տարբեր փաստաթղթերը ներկայացվել են ՈՒԵՖԱ-ի Բողոքարկման մարմնին՝ 2018թ. հունիսի 5-ին կայանալիք հաջորդ նիստին խնդրի վերաբերյալ որոշում կայացնելու համար:
11. 2018թ. մայիսի 25-ին Շիրակ ՖԱ-ը ՈՒԵՖԱ-ին տեղեկացրել է 2018/2019թթ. ՈՒԵՖԱ-ի Ակումբային մրցաշարին իր մասնակցությունը դադարեցնելու մասին:
12. 2018թ. մայիսի 28-ին ՈՒԵՖԱ-ն հայտնել է էթիկայի և կազապահական տեսուչին Շիրակ ՖԱ-ի կողմից 2018թ. մայիսի 26-ին ներկայացված վերոհիշյալ հաղորդագրության մասին: Կողմերին նաև տեղեկացվել է, որ Բողոքարկման մարմինը սահմանված կարգի համաձայն որոշում է կայացնելու գործի քննության ընթացակարգի մասին:
13. 2018թ. մայիսի 31-ին Բողոքարկող կողմը ներկայացրել է բողոքը: Ակումբը հղում է արել այն փաստին, որ հասկանում է, որ իր կողմից ՈՒԵՖԱ-ի մրցաշարերին մասնակցությունից հրաժարվելով՝ լսումներ չպետք է տեղի ունենան: Այդուհանդերձ, բերված բողոքում Բողոքարկող կողմը պնդում է հետևյալը.
 - Հայաստանի Ֆուտբոլի ֆեդերացիայի (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական կոմիտեի 2018թ. մայիսի 5-ի որոշումը և ՀՖՖ Բողոքարկման կոմիտեի 2018թ. մայիսի 18-ի որոշումը չեն կարող համարվել վավեր, քանի որ երկու գործերով էլ չեն ապահովվել դրանց անցկացման թափանցիկությունը և պատշաճ ընթացակարգը:

- Գործին առնչվող փաստերը դիտավորյալ աղավաղվում են ՀՖՖ կողմից:
 - Հիմնավոր կասկածներ կան, որ մի խումբ մարդիկ գործել են Շիրակ ՖԱ-ին վնաս պատճառելու դիտավորությամբ:
14. 2018թ. հունիսի 1-ին ԷԿՏ-ը տեղեկացվել է ակումբի պնդումների մասին: Կողմերին վերստին հիշեցվել է, որ Բողոքարկման մարմինը որոշում կկայացնի կողմերի ներկայացրած վերոհիշյալ գրավոր պնդումների հիման վրա:

III. Բողոքարկման մարմնի իրավական նկատառումները

Ա. Իրավական հիմքը

15. Սույն գործով կիրառելի են ՌԻԵՖԱ-ի Կանոնադրությունը, կանոնակարգերն ու կանոնները և, մասնավորապես, ՌԻՉԼ-ի Կանոնակարգը:
16. Համաձայն ԿԿ-ի հոդված 30 (4)-ի՝ «Բողոքարկման մարմինը իրավասու է քննելու Վերահսկողության, Էթիկայի և կազապահական մարմնի կողմից ընդունված որոշումների դեմ բողոքները, ինչպես նաև իրավասու է որոշում կայացնելու Վերահսկողության, Էթիկայի և կազապահական մարմնի Նախագահի կողմից իր քննությանը ներկայացված շտապ գործերով»:
17. Համաձայն ՌԻԵՖԱ-ի Չեմպիոնների լիգայի Կանոնակարգի (ՌԻՉԼ Կանոնակարգ)՝

4.02 Եթե ՌԻԵՖԱ-ն՝ իրեն հասանելի փաստական հանգամանքների և տեղեկությունների հիման վրա բավարար հիմքերով եզրակացնում է, որ ակումբը 2007թ. ապրիլի 27-ին ՌԻԵՖԱ-ի Կանոնադրության 50(3) հոդվածի ուժի մեջ մտնելուց ի վեր ուղղակի և/կամ անուղղակի կերպով ներգրավված է եղել որևէ գործողության մեջ, որն ուղղված է եղել ազգային կամ միջազգային որևէ խաղի ելքը կազմակերպելուն կամ խաղի ելքի վրա ազդելուն, ապա ակումբը ՌԻԵՖԱ-ի կողմից կճանաչվի մրցաշարին մասնակցելու իրավունք չունեցող: Այս իրավունքից զրկումը վավեր է միայն մեկ ֆուտբոլային մրցաշրջանի համար: Որոշումը կայացնելիս ՌԻԵՖԱ-ն կարող է ապավինել ազգային կամ միջազգային սպորտային մարմնի, արբիտրաժային կամ պետական դատարանի որոշմանը, սակայն, չսահմանափակվել այդ որոշումներով: ՌԻԵՖԱ-ն կարող է ձեռնպահ մնալ որևէ ակումբի մրցաշարին մասնակցության իրավունքից զրկելուց, եթե ՌԻԵՖԱ-ն բավարար հիմքերով եզրակացնում է, որ նույն փաստական հանգամանքների հիման վրա ազգային կամ միջազգային սպորտային մարմնի, արբիտրաժային կամ պետական դատարանի կողմից կայացված որոշման արդյունքում ակումբին արդեն իսկ արգելվել է մասնակցել ՌԻԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին:

4.03 Ի լրումն 4.02 հոդվածով նախատեսված որպես վարչական միջոց ակումբին մրցաշարին մասնակցելու իրավունքից զրկելուն՝ ՌԻԵՖԱ-ի Արդարադատության իրականացման մարմիններն ըստ անհրաժեշտության կարող են կիրառել նաև ՌԻԵՖԱ-ի Կարգապահական կանոնակարգով նախատեսված կարգապահական միջոցներ:

Բ. Փաստեր

18. Սույն գործը վերաբերվում է Շիրակ ՖԱ-ին՝ ներառյալ ակումբի պաշտոնյաներից մեկին, ում նկատմամբ Հայաստանի Ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից վերջերս կիրառվել են պատժամիջոցներ՝ կազմակերպված խաղերի հետ կապված դեպքերով:
19. Սույն վարույթի հիմնական նպատակն այս դեպքի՝ ՌԻԵՖԱ-ի կանոնակարգերի և, մասնավորապես ՌԻՉԼ-ի Կանոնակարգի 4.02 հոդվածի լույսի ներքո իրավական հետևանքների գնահատումն է, եթե այդպիսիք կան:
20. ՌԻԵՖԱ-ի Գլխավոր քարտուղարից ստանալով գործը՝ ԷԿ տեսուչը ներկայացրել է զեկույց՝ եզրահանգելով, որ ակումբը խախտել է ՌԻՉԼ-ի Կանոնակարգի հոդված 4.02-ով սահմանված ՌԻԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցելու համար ներկայացվող Ընդունելության չափանիշները: Տեսուչը միջնորդում է ակումբին ճանաչել ՌԻԵՖԱ-ի հաջորդ՝ 2018/19թթ. Չեմպիոնների լիգայի մրցաշարին մասնակցելու իրավունք չունեցող՝ անկախ ՌԻՉԼ-ի Կանոնակարգի 4.03 հոդվածով սահմանված կարգապահական միջոցների հնարավոր լրացուցիչ կիրառումից:
21. Սույն կարգապահական վարույթի մասին տեղեկացվելուց հետո՝ ակումբը հաստատել է ՌԻԵՖԱ-ի մրցաշարերի 2018/19թթ. մրցաշրջանին իր մասնակցության դադարեցման մասին: Ի լրումն, ԷԿՏ-ի զեկույցին ի պատասխան՝ ակումբը վիճարկում է ինչպես ԷԿՏ-ի զեկույցի, այնպես էլ ՀՖՖ-ի որոշումների եզրահանգումները:

ա. ՌԻԵՖԱ-ի իրավասությունը

22. Ինչպես նշվել էր, մինչ նոր մրցաշրջանի սկիզբը՝ ակումբները պարտավոր են լրացնել այսպես կոչված «Ընդունելության Թերթիկ», որը ներառում է ակումբերի հաստատումն առ այն, որ իրենք բավարարում են ՌԻԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի համապատասխան կանոնակարգերով սահմանված ընդունելության չափանիշներին: Համաձայն ՌԻՉԼ-ի Կանոնակարգի 4.01 հոդվածի՝ մասնակցության իրավունք ունենալու համար ակումբը պետք է 2007թ. ապրիլի 27-ին ՌԻԵՖԱ-ի Կանոնադրության 50(3) հոդվածն ուժի մեջ մտնելուց ի վեր ուղղակի և/կամ անուղղակի կերպով ներգրավված չլինի որևէ գործողության մեջ՝ ուղղված ազգային կամ միջազգային որևէ խաղի ելքը կազմակերպելուն կամ խաղի ելքի

վրա ազդելուն: Ակումբը պարտավոր է այս մասին գրավոր հաստատում ներկայացնել ՌԻԵՖԱ-ի ղեկավարությանը:

23. Ավելին, ՌԻԶԼ-ի Կանոնակարգի 4.02 հոդվածը սահմանում է, որ եթե ՌԻԵՖԱ-ին հասանելի փաստական հանգամանքների և տեղեկությունների հիման վրա ՌԻԵՖԱ-ն բավարար հիմքերով եզրակացնում է, որ ակումբը 2007 թվիսպրիլի 27-ին ՌԻԵՖԱ-ի Կանոնադրության 50(3) հոդվածն ուժի մեջ մտնելուց ի վեր ուղղակի և/կամ անուղղակի կերպով ներգրավված է եղել որևէ գործողության մեջ, որն ուղղված է եղել ազգային կամ միջազգային որևէ խաղի ելքը կազմակերպելուն կամ խաղի ելքի վրա ազդելուն, ապա ակումբը ՌԻԵՖԱ-ի կողմից կճանաչվի մրցաշարին մասնակցելու իրավունք չունեցող: Այս իրավունքից զրկումը վավեր է միայն մեկ ֆուտբոլային մրցաշրջանի համար: Որոշումը կայացնելիս ՌԻԵՖԱ-ն կարող է ապավինել ազգային կամ միջազգային սպորտային մարմնի, արբիտրաժային կամ պետական դատարանի որոշմանը, սակայն չսահմանափակվել վերոհիշյալ մարմինների որոշումներով: ՌԻԵՖԱ-ն կարող է ձեռնպահ մնալ որևէ ակումբին մրցաշարին մասնակցության իրավունքից զրկելուց, եթե ՌԻԵՖԱ-ն բավարար հիմքերով եզրակացնում է, որ նույն փաստական հանգամանքների հիման վրա ազգային կամ միջազգային սպորտային մարմնի, արբիտրաժային կամ պետական դատարանի կողմից կայացված որոշման արդյունքում ակումբին արդեն իսկ արգելվել է մասնակցել ՌԻԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին:
24. Հիմք ընդունելով վերգրյալը՝ Բողոքարկման մարմինը գտնում է, որ ակումբի կողմից ազգային կամ միջազգային որևէ խաղի ելքը կազմակերպելուն կամ խաղի ելքի վրա ազդելուն ուղղված որևէ գործողությանը հնարավոր մասնակցության դեպքում ընդունելության չափանիշներին համապատասխանությունը գնահատելիս անհրաժեշտ է երկու պայմանի առկայություն (ՌԻԶԼ-ի Կանոնակարգի, հոդված 4.02 (g)): Առաջինը, ակումբին պետք է թույլ տրվի մասնակցել ՌԻԵՖԱ-ի մրցաշարերին՝ նախորդ ներքին առաջնությունում ձեռք բերված մարզական արդյունքների հիմքով: Երկրորդ, ակումբը պետք է համաձայնի մասնակցել ՌԻԵՖԱ-ի ակումբային հաջորդ մրցաշարին՝ անկախ ակումբի դեմ մինչ այդ մրցաշարի սկսելը ՌԻԶԼ-ի Կանոնակարգի հոդված 4-ով նախատեսված որևէ հնարավոր վարչական կամ կարգապահական գործառույթներից:
25. Բողոքարկման մարմինը արձանագրում է, որ 2018թ. մայիսի 4-ին Շիրակ ՖԱ-ը ներկայացրել է այսպես կոչված «Ընդունելության Թերթիկը»՝ արտահայտելով 2018/19թթ. ՌԻԵՖԱ-ի ակումբային առաջիկա մրցաշարերին մասնակցելու իր պատրաստակամությունը: Այդուհանդերձ, 2018թ. մայիսի 30 և 31-ի հաղորդագրությունների միջոցով առարկելով ընթացիկ կարգապահական վարույթին՝ ակումբը որոշել է դադարեցնել իր մասնակցությունը 2018/19թթ. ՌԻԵՖԱ-ի առաջիկա մրցաշարին:
26. Հարկ է հիշատակել, որ թեև առաջին պայմանը բավարարված է, այն է՝ ակումբը ձեռք բերած մարզական արդյունքներով որակավորվել է ՌԻԵՖԱ-ի ակումբային

մրցաշարերին, սակայն ակումբը կամավոր կերպով դադարեցրել է իր մասնակցությունը ՈՒԵՖԱ-ի առաջիկա մրցաշարին: Նրանց այս որոշումը հաջորդել է կարգապահական վարույթ սկսելուն՝ համաձայն ՈՒՉԼ-ի Կանոնակարգի 4 հոդվածով սահմանված ընդունելության չափանիշների հնարավոր խախտման փաստի:

27. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սույն որոշման իրավական ուղղակի հետևանքն այն է, որ քանի որ ակումբը դադարեցրել է իր մասնակցությունը 2018/19թթ. ՈՒԵՖԱ-ի առաջիկա մրցաշարին, ՈՒԵՖԱ-ի սույն կարգապահական մարմինը իրավասություն չունի գնահատելու, թե արդյոք ակումբը իրականում բավարարում է ՈՒՉԼ-ի Կանոնակարգի 4.01 հոդվածով սահմանված ընդունելության չափանիշներին: Հարկ է նշել, որ հոդված 4.02-ի տարածքային շրջանակը ընդլայնվում է նաև ազգային առաջնություններում գրանցվող դեպքերի վրա, սակայն սա չի նշանակում, որ ազգային առաջնություններում պայմանավորված խաղերին առնչվող խախտումների համար ՈՒԵՖԱ-ն ակումբների դեմ գործ հարուցելու *carte blanche* /անվերապահ իրավունք/ ունի: Ազգային առաջնություններում պայմանավորված խաղերի մասով իրավասությունը սահմանվում է ՈՒՉԼ-ի Կանոնակարգերով և տրվում է միայն այն ակումբներին, որոնք ենթակա են ՈՒՉԼ-ի Կանոնակարգերին (CAS 2013/A/3256):

բ. Սույն գործով որոշվեց

28. Չնայած վերոնշյալ ընթացակարգային առանձնահատկություններին և որպես կարծիք */obiter dicta/* Բողոքարկման մարմինը, օգտվելով գործի կոնկրետ հանգամանքների առնչությամբ իր կարծիքն արտահայտելու սույն հնարավորությունից, ընդունում է, որ այս որոշման իրավական հետևանքները կարող են հանգեցնել այլ հետևանքների՝ այնքանով, որքանով դրանք առնչվում են ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին:
29. Բողոքարկման մարմինը համարում է, որ դադարեցնելով իր մասնակցությունը 2018/19 թթ. ՈՒԵՖԱ-ի մրցաշարերին՝ Շիրակ ՖԱ-ը նաև ենթարկվել է ՈՒԵՖԱ-ի Էթիկայի և կարգապահական տեսուչի կողմից ներկայացված զեկույցի պահանջին: Հետևաբար, ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի մասով հոդված 4.02-ի նպատակը և *ratio legis* /իրավունքի պատճառը/ իրացված են և, ուստի, պետք է համարվի, որ մրցաշարերին մասնակցելուց ակումբի հրաժարվելու իրավական հետևանքները նույնն են, ինչ նմանատիպ դեպքերում կիրառվող հնարավոր վարչական միջոցները (ՈՒՉԼ-ի Կանոնակարգ, հոդված 4.02):
30. Հարկ է նշել, որ առկա ապացույցները հաստատում են, որ Շիրակ ՖԱ-ը իր պաշտոնյաներից մեկի միջոցով ներգրավված է եղել ազգային առաջնության խաղերից մեկի ելքի կազմակերպման կամ խաղի ելքի վրա ազդեցություն ունենալուն ուղղված գործողություններում: ՀՖՖ-ի Կարգապահական կոմիտեին ուղղված նամակում Շիրակ ՖԱ-ը չի հերքում այն փաստը, որ ակումբի տնօրեն

Արարատ Հարությունյանը հնարավոր է, որ կապ է հաստատել ակումբի նախկին ֆուտբոլիստ Էդուարդ Կպոդոյի հետ՝ 2018 թվի մայիսի 5-ին Բանանց ՖԱ-ի և Շիրակ ՖԱ-ի միջև կայանալիք խաղի ելքը կազմակերպելու նպատակով: ԷԿՏ-ի զեկույցին ի պատասխան՝ ակումբը կրկին չի հերքել նշված հանգամանքը: Այս առումով, գործի նյութերում առկա են բավարար թվով ապացույցներ՝ ներառյալ հիշյալ անհատների միջև խոսակցությունների ձայնագրությունները և հաղորդագրությունները, որոնք փաստում են, որ խաղի ելքը կազմակերպելու փորձ եղել է:

31. Ակումբը միայն նշում է ՀՖՖ իրավասու կարգապահական մարմնի իրականացրած ընթացակարգում որոշ խնդիրների և ակումբի դեմ իբրև թե կազմակերպված դավադրության մասին: Սակայն ակումբը չի հիմնավորել այս պնդումներից ոչ մեկը: Վերջիններս բնավ չեն նսեմացնում Շիրակ ՖԱ-ի պաշտոնյայի կողմից վիճարկվող խաղի ելքը կազմակերպելու գործողության առկայության հաստատումը և դրա առկայությունը հիմնավորող լուրջ ապացույցները:
32. Հետևաբար, հաշվի առնելով նաև վերջերս Լոզանի Միջազգային Սպորտային Արբիտրաժային Դատարանի (CAS) ընդունված նախադեպային որոշումը՝ Շիրակ ՖԱ-ն իր պաշտոնյայի միջոցով առնվազն անուղղակիորեն ներգրավված է եղել պայմանավորված խաղ կազմակերպելու գործողությունների մեջ (CAS 2014/A/3625): Այսպիսով, Բողոքարկման մարմինը գտնում է, որ հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները՝ ՈԻՉԼ-ի կանոնակարգի 4.02 հոդվածը կիրառելի է սույն գործով, համաձայն որի Շիրակ ՖԱ-ը պետք է ճանաչվի ոչ իրավասու՝ ՈԻԵՖԱ-ի հաջորդ 2018/19թթ. ակումբային մրցաշարերի մրցաշրջանին մասնակցելու նպատակով:
33. Սույն եզրակացությունը համահունչ է Լոզանի Միջազգային Սպորտային Արբիտրաժային Դատարանի (CAS) նախադեպային պրակտիկային, գործ CAS 2013/A/3256: Ըստ էության, և վերոգրյալ ընդհանուր բացահայտումները համադրելով սույն գործի փաստերին՝ Բողոքարկման մարմինը գտնում է, որ Շիրակ ՖԱ-ի կողմից ՈԻԵՖԱ մրցումներին իր մասնակցության դադարեցումը պետք է համարվի որպես կամավոր կերպով մասնակցության իրավունքի զրկում ժամկետով, որը հավասարազոր է ՈԻԵՖԱ-ի կողմից ՈԻՉԼ-ի Կանոնակարգի 4.02 հոդվածով նախատեսված մասնակցության իրավունքի զրկման ժամկետին: Այս առումով, թե ինչպես է նշված ժամկետը հարկադրվել՝ ՈԻԵՖԱ-ի Կարգապահական մարմինն այսպիսով համարում է անհամապատասխան: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ այս տարբերակներից որևէ մեկը չի բացառում ակումբի դեմ հետագա կարգապահական վարույթի հարուցման հնարավորությունը: Հակառակը՝ այդ հնարավորությունը մասնավորապես սահմանվում է ՈԻՉԼ-ի Կանոնակարգի 4.03 հոդվածով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքարկման մարմինը

որոշեց

Բողոքարկման մարմինը որոշում է, որ Շիրակ ՖԱ-ի դեմ հարուցված գործը
դադարեցվում է:

Նախագահ՝ /ստորագրություն/ Պեղրո Տոմաս